ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Լ-ԾԷՆ ԱՒ-ԳԱՂԻՍԱՑՈՅՆ ԱՄԱՓՈՓԱԿԱՆ ՀՐԵԱՅ ԱՆՈՒՆՈՎ ԳԷՐՔԸ [1] ։

ԻՐԵՒ այն ինչ ախտն [2] 'ի վեր երևեցաւ 'ի Փարիզ, արհիեպիսկոպոսն Ռըլլէն 'ի դուրս եկ 'ի Թագստենէն, երևեցաւ 'ի քաղաքամիջի։ Ռանզի որպէս զՖենելոն համարէր, թէ և եպիսկոպոսաց են աւուրք պատերազմի. և չէր նա յայնպիսեաց որ խուսափիցէ 'ի տեղւոջէ վտանգին։ Կանխեալ գուշակեալէր 'ի կոնդակս իւր "Զ զեղումն հեղեղաց մահուան, զորոյ զընթացսն չմարթիցին խափանել ոչ հսկող պահապանք և ոչ աչալուրջ զգուշութիւն"։ և յաւելոյր յայլ հովուական նամակի իւրում 'ի 29 սեպտ. 1831, զոր ուղղեր առ կղերիկոսս իւրոյ իշխանութեան. "Զէ ինչ հեռի վայրկեանն, յորում չիցէ բաւական առաքինութիւն սովորական. յորում պէտք են անձնամատն դիւցազնութիւն"։ Այսպէս յառաջագոյն բան տայր, և ապա 'ի միջի վտանգաց գայր կատարելըզխոստումն իւր։

Զարութիւնք բռնադատեալ էին զնա 'ի Թագուստ. այլ հասեալ էր ժամն, զի լուծցէ 'ի չարութենէ մարդկան զվսեմ վրէժս խաչին։ Մինչդեռ վատքն և փոքրոգիք յանմատչելի ապաւէնս պահապանս անձանց կարգէին զանձնասիրութիւն, և վանդակապատս զերկիւղ, արհիեպիսկոպոսն Ռըլլէն 'ի դուրս եկ 'ի Թագստենէ իւրմէ։ Ի հիւանդանոցին չարաչար զայրացեալ էր ախտն. անդ, անդ է տեղի նորա. ոչ թողուցու ումեք զտեղի իւր, մի վայրապար ճգնիցիք շարժել զնա անդուստ։ Օ կնի ամի միոյ և առաւել յշ ապրիլի 1832 երևէր միս անգամ 'ի հրապարակի, և թեմն որ կորուսեալ էր զնա՝ գտանէր զնա միւսանգամ 'ի բանակի ցաւոց։ Հոզվուրդն ընկեցեալ էր 'ի ջուր երկուս 'ի պահակապանաց քաղաքիս, զորս համարէր մեղապարտս կարծեցելոյ թունաւորութեանն, և 'ի նմին աղմկայոյզ ժամու եհաս արհիեպիսկոպոսն 'ի հիւանդանոց անդր։ Ոչ ըստանգն ոչ ևս խափանէր զնախանձ նորա. նոր ոմն Կարոլոս Պորրոմէոս ոստնու ընդ սեամն հիւանդանոցին, անցանէ ընդ ամենայն սրահսն, զկայ առնու առ մահճաքն, լսէ ուրախութեամբ զի բազումք քանթէ սակաւք 'ի հիւանդաց ընկալեալ են զօժանդակութիւնս աստուածպաշտութենէ։ Յառաջնոյ օրէ անտի, յորում յայտնի եղև մաղձացաւն, յանձնեալ էր արկեղ նպաստից 10,000 ֆրանքս. յելանելն 'ի հիւանդանոցէն յաւել յայն այլ ևս 1000 ֆրանքս, զի փոխեսցին հանդերձք ախտացելոցն, քանզի այրէին զհանդերձս նոցա 'ի մտանելնոցին 'ի հիւանդանոցն։ Կողոպտեալ, մերկացեալ, կորուսեալ զամենայն, այլ ոչ 'ի հաշիւ արկանէր զկեանս իւր. հաշուէր միայն զպէտսն, որ մեծամեծք էին։

Օ հետ չոգաւ օրինակի արհիեպիսկոպոսին իւրոյ և բովանդակ կարգն կղերիկոսական։ Ի ձայն նորա երէցն Կարնիէ, առաջնորդ միաբանութեան սրբոյ Ալուլիկեայ մատուցանէր զվարժարան իւր 'ի ժողովել անդէն զմաղձացաւսն, և զաշակերտեալսն 'ի նոցին սպասաւորութիւն։ Այսոյն հետայն և արքեպիսկոպոսն Ռըլլէն յանձն առնէ պետութեան զտուն իւր որ 'ի Ռոնֆլան, զի անդէն դարմանեսցին ախտաժէտքն կամ զերծեալքն 'ի վըտանգէ ախտին. որով և թերևս աւարառուք տանն անդէն գտանէին իւրեանց տեղի ապաստանի։ Ամենայն ուրեք տայ պատասխանի 'ի յորդոր հայրապետին իւրոյ զինուորութիւնն սուրբ։ Մինանձունք սրբոյն Ղազարու, վարժապետք աստուածաբանութեան 'ի Փարիզ և օգնականք նոցա, երիցունք թեմին Փարիզի և մերձաւոր թեմից ամենեքին միանգամայն

1 Տես երես 106։

2 Մաղձացաւն. այն է ֆոլէրա. Cholera Morbus.

պատրաստ կան հրամանաց պետու-
թեանս. կուսանք բարենպաստա-
ւորք, Գոստինեանք և Իւրընկալք
կազմ կան 'ի տեղւոջ իւրեանց։ Ա-
ստորև ինչ մնացին և աշխարհականք.
և բազմութիւն երիտասարդաց ա-
ռուարձանի սրբոյն Գերմանոսի, յո-
րոց համարի էին ազատքն Դերկոր-
լէ, Վոկէ, և Շամիանեի, անձնա-
մատոյց լինին 'ի սպասաւորութիւն
կամ յայցելութիւն հիւանդաց։ Ար-
հիեպիսկոպոսն Դրլէն յորդոր լինի
կամ առաջնորդ մեծի այսր բանակի
սիրոյ. ընթանայ ընդ ամենայն հի-
ւանդանոցս Փարիզի, և հովուական
նամականի նորին բորբոքեն զսուրբ
հուր առաքինութեան։ "Գնացէք,
գրէր առ վարժապետն աստուածա-
բանութեան, և յղէր զնոսա 'ի հիւ-
րանոց սիրոյն, գնացէք, հունձն ճոխ
է, և թիւ մշակացն սակաւ „։ Յետ
այնորիկ 'ի նամակին զոր գրէր առ
ժողովրդապետն Փարիզի 'ի 6 ապրի-
լի, "Դուն գործեսցուք, ասէր առ
նոսա, զի զկնի աւուրցս տառապա-
նաց, ասասցեն զմիոյ միոյ 'ի մէնջ զոր
պատմութիւնն վկայէ զհրեշտակա-
կրօն երիցուէն, զսրբոյն Վինկենտ-
եայ Պաւլայեցւոյ, զոր եդեալ եմք
օրինակ անձին, 'ի ժամանակս երկպա-
ռակութեանց յորում ընդհարկանէին
ընդ միմեանս, կեղեքէին զիրեարս, և
'ի վիշտ վտանգի արկանէին զմիաբա-
նասէր ընկերութիւն մարդկան, նա
նուիրեալ բովանդակութեամբ 'ի բա-
րեգործութիւնս և 'ի սփոփանս տա-
ռապելոյ մարդկութեանն՝ տայր պա-
տասխանի որոց հարցանէին ցնա.
Վասն Աստուծոյ եմ ես և վասն աղ-
քատաց „։

Համառօտ ասել, արհիեպիսկո-
պոսն 'ի կոնդակին յորում պատուիրէր
աղօթս վասն դադարելոյ պատուհա-
սին, զոր և գրէր առ ոտամբ խաչին
յ18 Ապրիլի 'ի միում աւուրց աւագ
շաբաթին, ասէր սրտառուչ խանդա-
ղատանօք. "Սիրտ մեր լցեալ գթու-
թեամբք, զոր ազդեն տխրագին և
մեծահանդէս աւուրքս, բռնութիւն
իմն յանձին զգամք, զի 'ի յորդորել
մեր զձեզ յապաշխարութի, յաղօթս
և 'ի բարեգործութիւնս, խօսեսցուք
ձեզ և զհովուական հոգոց մերոց, ո-
րովք առաւել քան զառաւել անձուկ
կապանօք կցորդակից ձեզ լինիմք. ո-
րով և զթշուառութիւն միոյ միոյ 'ի
մերոց վիճակաւորաց իբրու անձին
համարիմք, և նուիրեմք ձեզ զինչս՝
եթէ գուցէ ինչ տակաւին, և զկեանս
մեր, որպէս զի ամոքեսցուք իւիք ըզ-
վիշտս ձեր։ Եթէ յանկարծ ոք 'ի
ձէնջ պատճառանօք իմն երկբայեսցի
ինչ զայսոցիկ յօժարութեանց մերոց
'ի պատճառս իրաց իրաց զոր գործեալ
իցէ հակառակ մեր, իշխեմք ասել
ցնա որպէս զՅովսէփ հնոց օրինաց.
"Աղբայր ձեր եմ. մի երկնչիցիք, մի
խռովեսջիք ընդ ամենայն որ անցին.
այնպէս կամք էին Աստուծոյ։ Օ՛չարն
զոր կամէին գործել ինձ փոխեաց 'ի
բարի, նա ինքն առաջնորդեաց յայս
վախճան իրաց, և կամեցաւ ձեռամբ
իմով ապրեցուցանել զբազումս „։

Օ՛չմարիտն ասէր աստուածասէր
և վեհանձն արհիեպիսկոպոսն, քան-
զի ամենայն գործք նորա միաբան էին
բանիցն։ Ցեսաք զի 'ի վերայ բազկաց
իւրոց տանէր զհիւանդս զգածեալս
ախտիւն, մինչդեռ վիճէին տակաւին
եթէ փոխադրակա՞ն իցէ ախտն թէ
ոչ։ Յորչափ զայրանայր ախտն, քահա-
նայապետն Քրիստոսի ընթանայր
զկնի հետոց նորին, և զհարուա-
ծեալսն 'ի նմանէ՝ 'ի վեր կանգնէր,
փրկէր զոգիս 'ի յուսահատութենէ,
և զնշոյլ անմահութեան շողացուցա-
ներ յաչս օրհասականաց։ Ահաւոր իմն
տեսիլ հանդիսացաւ 'ի հովուական
այցելութիւնս նորա առ մնարօք ու-
րումն յօրհասականաց անտի։ Ցառա-
պեալն 'ի հոգեվարս էր, և համա-
հրեշտակ արհիեպիսկոպոսն ամբարձ
'ի վեր զձեռն իւր 'ի վերայ տառապե-
լոյն զի օրհնեսցէ զնա. և ահա հա-
սեալն 'ի դրունս մահու դարձուցեալ
առ հովիւն զդէմսն, յորում տակա-

ւին 'ի կապուտակ երանգն մահու ազդէին կիրք կենդանութեան, գոչեաց սոսկալի ձայնիւ. "Ի բաց գնա յինէն, ես մի եմ յաւարառուացն արքեպիսկոպոսարանին"։ Այս բան նշուլագեղ պերճացաւ Ճակատ հայրապետին 'ի գորովոյ գթոյն և յանպատումներողամտութենէ։ Կատարէր զսկսեալ օրհնութիւնն 'ի վերայ գլխոյ օրհասականին, և ասէր. "Աղբայր իմ, այդ իսկ առաւելագոյն պատճառք են հաշտելոյ ինձ ընդ քեզ և հաշտեցուցանելոյ զքեզ ընդ Աստուծոյ"։

Հապա, մերձ դիք զայսոսիկ տեսարանս ընդ տեսարանացն զոր Սիւ նկարագրէ։ Օխողխողմունս յանդաստակս եկեղեցւոյ Տիրամօրն, զհրաշակայազօր քարահատն որ յարիւնաշաղախ ծուէնս պատառէ զԳողգոթա, զորոյ և զաղբելին Կիպուլէ զակնն 'ի դուրս ոստուցանէ հարուածով փայտոտինն և յաղթահարէ, զյետին շուայտութիւն Մերկամարմնոյն, զմրցանս ցքւոյն զոր նայն մրցեցաւ ընդ պահապանի գազանաց մինչև ցմահ, զամպարիշտ խեղկատակութիւնսն Լինի Մուլէնեայ, զդիմակաւոր ծպտել մաղձացաւին, զտաղտկալի ծաղրածութիւնս ամբոխին 'ի վերայ կառաց մեռելոց, զտեսիլ նեխահոտելոյ դիականն՝ որ 'ի դուրս ոստուցեալ 'ի խորտակելոյ արկեղէն Թաւալի ընդ ոտիւք երիվարացն, որ վարէին զկառս Մորիանվալ տիկնոջ. տեսեալ զայս ամենայն՝ ասա ինձ, ո՞ առաւել իցէ եթէ ըստ տեսութեան գեղեցիկ դպրութեց, և որ ինչ գորովական գուցէ և փափուկ, և եթէ ըստ տեսութեան արուեստի որ զարթուցանէ զմիտս և շարժէ զսիրտ. մաղձացաւն արդեօք, զոր նկարագրէ Սիւ 'ի վիպասանութեան իւրում, եթէ մաղձացաւն զոր նկարագրէ պատմութիւն։

Տակաւին չասացաք զամենայն։ Մինչդեռ զՍտուծոյ խօսէր հայրապետն առ օրհասականն, բազումք 'ի նոցանէ չև մտեալ 'ի յաւիտենականութիւնն, յետս կոյս դարձուցանէին զհայեցուածս իւրեանց։ Հարք անչնչացեալք, մարք օրհասականք, յանձին գանձեալ զչերմութիւն սիրոյն 'ի ցուրտ մահուան, խօսէին առ նա զորբացելոց որդւոց իւրեանց մնացելոց առանց ուրուք ապաւինի 'ի լքեալ խանձարուրսն։ Այս բան խառվեցան աղիք հայրապետին, բողբոջեցաւ 'ի սրտի նորա մեծ ինն և քրիստոնէական խորհուրդ. տարածէ զբազուկս իւր առ անկողնովք մահու միսիթարելոց ծնողաց, և յանուն քրիստոնէութեան հայրն հասարակաց ամենայն որբացելոց գրէ զնոսա յիւր որդիս։ Ի հիւանդանոցի անդ, 'ի միջի կոտորածի ախտին, 'ի դաշտ անդր պատերազմի աստուածպաշտութեան հաստատեցաւ գործ փրկութեան որբացելոցն 'ի մաղձացաւէ. այն՝ որ 'ի ժամուն յորում գրեմք զտողքս, առնու զկատարումն ոչ ինչ դրժեալ խոստմանն։ Գրկրորդս Վինկենտ Պաւլայեցի աներկևանս արար զմարսն հասեալս յափն գերեզմանին, տուեալ տառապելոց որբոց նոցա 'ի մայր զսէրն քրիստոնէական. "Պառեսցին զօրութիւք իմ, ասէր, այլ ոչ շինջի նախանձ իմ և արութիւն"։

Հաւասիկ այսպիսի էր քրիստոնէութիւն յաւուրս մաղձացաւին, ահա զայս գործեցին երիցունք։ Այսպէս 'ի ժամ անտի սկիզբն էառ բարենշան ձիգն այն 'ի նպաստ ուղղափառութեան. յետ այնորիկ արգելաւ և ընդհատեցաւ միայն, որպէս մեքս յուսամք, յանխոհեմութենէ ոմանց և 'ի չարութենէ ախտից այլոց՝ յորոց 'ի թարգման և 'ի թիկունս յարեաւ Սիւ։ Պարտ էր նմա արկանել առագաստ 'ի վերայ այսր մասին մաղձացաւի, որ պատիւ մեծ ածէր մարդկութեանս, և մերկանալ զհակառակն, և զոր ինչ սոսկալին էր յայն աղէտս կուտակել ճղճիմ մանրագրութեամբ և այնպիսի երևակայութեամբ, որ 'ի քնէ յօժարեալ է 'ի թատրերգութիւն։ Խորհեցաւ

եթէ գեղեցիկ և աղնուական իմն ի-
ցէ վատահամբաւ առնել զերիցունսն,
զորոց ասէ մեզ պատմութիւն եթէ
զտունս իւրեանց ետուն 'ի հիւրանոց
և զանձինս 'ի սպասաւորս ախտաժե-
տաց, ներող եղեն, աղօթս մատուցին,
ձեռն ետուն և մխիթարեցին զհի-
ւանդս, և յորդեգիրս առին զորբա-
ցեալսն։ Այս ուրախութիւն անձին
համարեցաւ յանդիման առնել զնոսա
իբրու աղմկայարոյցս, որ խռովայոյզ
շաղակրատանօքն իւրեանց գրգռիցեն
զժողովուրդն 'ի յուսահատութիւն և
'ի սպանութիւն. և իբրու շորթիչս
կտակաց և արծաթասէրս դառնացու-
ցանիցեն զՀոգեվարսն Հարտեայ տնո-
տի շաղփաղփանօք և ափիոնիւ, որ-
պէս զի մոցեն 'ի ժառանգութիւն
նոցա, և իբրու վատասիրտս փախչի-
ցին 'ի տեսլենէ մաղձացաւաց. որպէս
նենգաւորս ընթանայցեն ընդ հիւան-
դանոցս, ոչ 'ի խնամել զհիւանդս և
օգնական լինել աղքատաց, այլ 'ի տե-
սանել Լօզ Բոմբոնս յանդգունս և
անամօթ մերկալանջս, և խափան ար-
կանել զայնպիսիս օրինաւոր տնարա-
րութեան ուստերաց և դստերաց Ճո-
խաց, զորս անժառանգել կամէին։
Զհա Սիւ այսպիսի տայ կերպարանս
քրիստոնէութեան, երիցանց, և ա-
մենեցուն՝ որ գամ մի աղնուախոհ ե-
ղեն մտօք 'ի ժամանակս մաղձացա-
ւին. կամեցաւ յանդիման առնել զա-
մօթալի և զսոսկալի ախտս մարդկու-
թեան, զերկիւղ, զվատութիւն, ըզ-
ցանկութիւն, զատելութիւն, զնեն-
գութիւն, զարիւնաշաղախն ձեռօք
զկատաղութիւն, զանկարեկիր բարս
և զանզգամ անբանութիւն, զանաս-
նային և զչիմար անառակութիւն.
փակեաց զաչսն զի մի՛ տեսցէ զարու-
թիւն, զգթութիւն զառատատուրն
ձեռօք, զդիւցազնական իմն զանձին
մոռացութիւն և զամենայն առաքի-
նութիւնս գթոյ և ներողամտութեան։
Այս կարի իսկ քաջ. պատուհասեցաւ
և ըստ տեսութեան արուեստի բա-
րոյական պատժովն, որով խցաւ մտաց
նորա աղբիւր հիանալի գեղեցկութեանց
ըստ մատենագրութեան մասին։ Ոչիք
հնար. հրաշալի հանդէս անձնանուէր
և աղնուամիտ քաջութեան, որով
յայտնի լինի 'ի բնութեան մերում
շունչ արարչագործին Աստուծոյ, ա-
ռաւել ևս ջերուցանէ զսիրտ մարդոյ,
քան թէ Ճշգրտատիպ նկարագրու-
թիւն դիական նեխելոյ, կամ տեսա-
բանաց խողխողման։ Միրտ առաւել
շարժի յայնմանէ՝ որ ամբառնայ զնա
'ի վեր առ Աստուած, քան թէ յայն-
մանէ որ նուաստացուցանէ մինչև
յանբան և մինչև յանկենդան բնու-
թիւն։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ

Ինչպէս բոլորաձև շինուածք մը աւելի ա-
ժան կ'ըլլայ քան զքառակուսին, և ինչպէս քա-
ռակուսին աւելի աժան քան զքառանկիւնին[1]։

Այսկէ առաջ Բազմավիպիս Մարտ
ամսուն մէջ (երես 91) Կոստանդնու-
պօլսոյ անձրևաչափին տակը ծանօթու-
թեան մէջ ջրշեղջ ցոյց տալու շինելու
համար ըսեր էինք, թէ բոլորաձևը
աւելի աժան կ'ըլլայ քան զքառակու-
սին, և քառակուսին աւելի աժան քան
զքառանկիւնին։ Այս խրատս տեղի
տալով ոմանց տարակուսելու՝ թէ ար-
դեօք սխալմամբ, կամ թէ վեր 'ի վե-
րոյ հայեցուածով մը այսպէս առա-
ջարկեցինք. զի ինչպէս կ'ըլլայ, կ'ը-
սեն, որ գործածուած նիւթերը մի և
նոյն ըլլան, և միայն ձևոյն պատճա-
ռով աժան կամ սուղ ըլլայ շինուածք
մը. ասա՛ ասես քիչ մը խելքի դէմ գա-
լով, լուծմունքը խնդրեր էին։

Բայց ան տարակուսող անձին մաս-

1 Քառակուսի կ'ըսենք, երբոր չորս անկիւնը և չորս կողմը հաւասար են միմեանց. իսկ քառանկիւնը՝ չորս անկիւնը մէկմէկու հաւասար, բայց չորս կողմը միմեանց հաւասար չեն։